ՀԱՑՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԻՐ ՆՎԵՐԸ ՓԱՐԻԶԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԺԱԿ ՇԻՐԱԿԻՆ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԳԼԽԱՆ
ԵՐԵՎԱՆ

ԱԼՖՈՐՎԻԼԻ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

27 մայիսի, կիրակի: Երկրորդ Ծաղկազարդ:

Օրվա տոնի առթիվ Վեհափառ Հայրապետը հանդիսավոր ս. պատարագ մատուցեց և Բանին կենաց քարոզությամբ մխիթարեց Փարիզի հայ հավատացյալներին:

Ս. պատարագին ներկա էին նաև քույր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ, պետական ու քաղաքային իշխանությունների պատասխանատու աշխատողներ, ինչպես նաև հավատացյալների խուռներամ մի բազմություն՝ ավելի քան 1500 հոգի, Փարիզից, Ֆրանսիայի զանազան շրջաններից, Շվեյցարիայից, Անգլիայից, Կանադայից և այլ երկրներից:

«Հայր մեր»-ից առաջ օրվա տոնի առթիվ քարոզեց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՓԱՐԻԶԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(27 մայիսի 1979 թ.)

«Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի»:

Այս բնաբանով կուզենք ձեզի խոսիլ, սիրելի հավատացյալներ: Պողոս Առաքյալի խոսքերն են՝ հնազանդ եղեք մեկդ մյուսին, Քրիստոսի հանդեպ հնազանդությամբ, խոնարհությամբ, Քրիստոսի սիրով: Այս է հիմնական միտքը այս տողերուն, զոր Պողոս Առաքյալ գրի կառնե և կոչարկե իբրև նամակ, հավատացյալներու համայնքին:

Ինչպես գիտեք, Քրիստոսի Հարութենեն և մանավանդ Հոգեգալուստի հրաշքեն հետո, Քրիստոսի աշակերտները՝ սուրբ Առաքյալները, տարածվեցան աշխարհով մեկ, որպեսզի Ավետարանի լույսը տանին ամեն տեղ,

ոչ միայն հրեաներուն, այլև բոլոր հեթանոսներուն, այսինքն բոլոր ժողովուրդներուն: Ահա թե ինչու հայ եկեղեցին Պողոս Առաքյալը կկոչե «Հեթանոսաց Առաքյալ»:

Պողոս Առաքյալ այն մեծ անձնավորությունը եղավ, ապառաժյա հավատքով, անսահման և անսակարկ սիրով դեպի Քրիստոս, իր հզոր իմացականությամբ, իր աշխատելու անսպառ եռանդով, հոգնություն չգիտցող մարդը, որ հաճախ քաղցած մնաց, միշտ հալածվեցավ և բանտե բանտ տարվեցավ, Փոքր Ասիո քաղաքներեն մինչև Հունաստան և հետո մինչև Հռոմ, ամեն տեղ Քրիստոսի լույսը տարածեց, ինչպես Թադեոս և Բարթողիմեոս Առաքյալները Հայաստանի մեջ առաջին սերմերը ցանեցին նոր հավատքին:

Պողոս Առաքյալ, բաժնվելով իր կազմակերպած համայնքներեն, չմոռցավ զանոնք, միշտ կապ պահպանեց անոնց հետ իր նամակներով:

Եվ ահա, Եփեսացվոց ուղղյալ իր գրության մեջ այս նշանակալից խոսքը կբանաձե՝ թե հնազանդ եղեք մեկդ մյուսին հանդեպ՝ Հիսուսի երկյուղով:

Սիրելի ժողովուրդ, որպեսզի ճիշտ հասկնանք այս խոսքերու բուն իմաստը քրիստոնեական համայնքային կյանքի առնչությամբ, մենք պետք է պահ մը պատկերացնենք, թե ինչպիսի ըմբռնում կար հավաքական կյանքի մասին աշխարհի մեջ, հեթանոս աշխարհի մեջ:

Անշուշտ հին աշխարհը՝ Հռոմը և անկե առաջ Հունաստանը, քաղաքակրթության զմայլելի բարձունքներու հասավ ճարտարապետության, գրականության և արվեստներու ասպարեզներու մեջ, սակայն այդ քաղաքակրթությունը հեռու էր տակավին Քրիստոսի սիրո և խաղաղության վարդապետութենեն:

Պողոս Առաքյալ այն հզոր անձնավորությունը եղավ, որ Քրիստոսի սիրո և խաղաղության Ավետարանը բերավ այդ քաղաքակրթության վրա և բեղմնավորեց, պայծառակերպեց հին աշխարհի միտքն ու հոգին: Եթե Հելլենները հինգերորդ դարուն, Պերիկլեսի դարուն, Ակրոպոլը ստեղծեցին, որ մինչև այսօր անմրցելի գեղեցկություն է, սակայն ոգեկանության և մարդասիրական համամարդկային գաղափարներու իմաստով, Քրիստոս նոր Ակրոպոլ մը բարձրացուց հին քաղաքակրթության ավերակներուն վրա: Մանավանդ Պողոս Առաքյալ հանդիսացավ այն մեծ ճարտարապետը, հոգիներու ճարտարապետը, որ Հիսուսի սիրո լույսով շաղախեց ու կառուցեց մարդկության նոր աշխարհը: Այս մտածումներու, այս իրողություններու հորիզոնին վրա Պողոս Առաքյալի խոսքը՝ «Հնազանդ եղեք մեկդ մյուսին Քրիստոսի սիրով» կամ ավետարանական այլ նման պատգամներ մեկը մյուսին ներողամիտ ըլլալու, ով որ մեծ է՝ ծառա ըլլալու և այլն, հին աշխարհի մեջ, հելլենական կամ հռոմեական, չեք գտներ, ոչ իսկ Հին Կտակարանի մեջ:

Փոխադարձ սիրո, գութի և ներողամտության գաղափարները Քրիստոս իր Ավետարանով աշխարհ բերավ, և Պողոս Առաքյալ սքանչելի կերպով զանոնք բանաձևեց և պարգևեց ոչ միայն իր ժամանակին, այլև բոլոր ժամանակներուն:

Սիրելի հավատացյալներ, Պողոս Առաքյալի այս պատգամը Մենք կուզենք այսօր նաև ձեզի բերել, որովհետև կապրիք համայնքային կյանքի մեջ: Արտասահմանի հայությունը համախմբված կապրի և պետք է ապրի անայլայլ և անշփոթ կերպով Հայաստանյայց առաքելական Մայր եկեղեցվո կամարներուն ներքև՝ կազմելով կրոնական համայնքներ: Այս է մանավանդ

արտասահմանի հայության ներկայի և ապագա կյանքի ու գոյատևման ամենամեծ և պատմականորեն փորձված հիմնաքարը:

Հավաքական կյանքի մշտապես նոր գաղափարներ են, սիրելի հավատացյալներ, որ մեկս մյուսին հանդեպ հնազանդ ըլլանք, և եթե մեր մեջ մեկը մեծ է՝ սպասավորը ըլլա բոլորին:

Շարունակելով Մեր մտածումը, կուզենք երկու խոսքով արտահայտվիլ նաև ազատության գաղափարի մասին, որ այժմեական գաղափար մըն է: Ազատության գաղափարը մարդկային ազնիվ իդեալներեն մեկն է անշուշտ, հինեն մեզի եկած: Քրիստոնեությունն ալ յուրովի արտահայտած է այս գաղափարը, նախ՝ Հիսուսի խոսքերով, բայց մանավանդ՝ Պողոս Առաքյալի: Հատկապես Մենք շատ հատկանշական կգտնենք Պողոս Առաքյալի բանաձևումը այս առնչությամբ, որ կըսե՝ «Իբրև ազատ եղէք, բայց ազատութիւնը մի՛ գործածէք իբրև պատրուակ չարութեան և անկարգութեան»:

Չէ՞ք գտներ, որ շատ այժմեական է այս մտածումը: Ազատության և բարոյական կարգապահության գաղափարներու մասին է խոսքը: Մեր օրերու մարդկությունը տակավին չէ գտած հավասարակշռություն և ներդաշնակություն այս երկու գաղափարներու միջև: Մենք կհավատանք, թե բոլոր մտածողները մեր օրերուն, աշխարհի վրա ամեն տեղ, անկեղծորեն կհետապընդեն ստեղծել այդ ներդաշնակությունը, այդ իդեալի իրականացումը: Մեր ժամանակներու առջև դրված մեծագույն հարցը կկայանա այդ ներդաշնակությունը գտնելու մեջ:

Այսպիսի պատմական իրավիճակի մեջ, Քրիստոսի Ավետարանը, առաքյալները իրենց մտածումներով, կկարծենք, մեծ, անփոխարինելի նպաստ մը կրնան բերել, եթե մենք բաց աչքերով, բաց սրտով մոտենանք այդ փրկարար պատգամներուն, այդ լույսին:

Մարդ ըլլալ՝ կնշանակե ազատ ըլլալ. ազատ ըլլալ՝ կնշանակե բարոյական, ընկերային կարգապահության մը ենթարկվիլ: Կարգապահութենե դուրս ազատություն չկա: Մեծ բանաստեղծ և մտածող Գյոթեն, նույն միտքը կարտահայտե ըսելով՝ «Միայն օրենքը կարող է ազատություն պարգևել մեզի»:

Այսօր մեր եկեղեցին և մեր քույր եկեղեցիները այս լույսով է, որ կուզեն առաջնորդվիլ, և այս լույսը կուզեն բերել մարդկության զարգացման ճանապարհին վրա, իբրև քրիստոնեության նպաստ, որպեսզի վերակառուցվի այս աշխարհը նոր հիմքերու վրա, որպեսզի այս աշխարհը ըլլա իրապես արդար, ըլլա իրապես ավելի ազատ և դառնա իրապես խաղաղ, ու մարդիկ իրարու նային իբրև եղբայրներ և գործակիցներ, ազգեր և ժողովուրդներ ու պետություններ համերաշխորեն գործակցին՝ ապահովելու համար բոլորի երջանկությունը: Մեր օրերու կենսական պահանջքն է և փրկության միակ ճանապարհը, որ բարի կամեցողության և խաղաղության ոգիով առաջնորդվին մարդիկ, ժողովուրդներ և պետություններ:

Այս խոհերեն և մաղթանքներեն հետո կուզեինք հոգեկան մխիթարության զգացումով մը ձեզի հայտնել, թե սուրբ պատարագեն հետո հոգեհանգստյան պաշտոն պիտի կատարենք ի հիշատակ Սարդարապատի ճակատամարտի հերոսներուն, որոնք ինկան վասն հավատքի և վասն հայրենիքի:

Սարդարապատի ճակատամարտը երկրորդ Վարդանանցն է մեր պատմության, որուն մասնակցեցավ մեր եկեղեցին՝ ի գլուխ ունենալով Մայր Աթոռ ս. Էջմիածինը, Գևորգ Ե երջանկահիշատակ և հայրենասեր կաթողիկոսի օրոք, և իր կարևոր նպաստը բերավ Սարդարապատի հաղթանակին:

Եվ պատահականություն մի՛ նկատեք, որ մեր օրերուն ալ Հայաստանի մեջ Սարդարապատի ոգեկոչումը առաջին անգամ կատարվեցավ ս. Էջմիածնի բարձունքին հայրապետական կոնդակով:

Սարդարապատի ճակատամարտը համազգային բնույթ կկրե, և մեր եկեղեցին մեր ազգության անբաժան մասը ըլլալով, կմասնակցի այդ ոգեկոչումին, մանավանդ որ զոհվածներու մեջ կային նաև բազմաթիվ եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ, որոնք կռվի դաշտ գացին հանուն իրենց հայրենիքի փրկության:

Սիրելի հավատացյալներ, բոլորս աղոթենք Սարդարապատի զոհերու հոգիներու խաղաղության և լուսավորության համար:

Աղոթենք նաև Սարդարապատի հերոսներու հաղթանակով վերածնած մեր մայր հայրենիքի բարօրության ու ծաղկումին համար, և համայն աշխարհի խաղաղության համար:

«Այլ և շնորհք և սէր և օրհնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ». ամեն:

Հավարտ ս. պատարագի բազմահարյուր հավատացյալներ, երկյուղած բարեպաշտությամբ, ս. հաղորդություն ստացան:

Այնուհետև Հայոց Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն Սարդարապատի հերոսամարտում զոհված հայ մարտիկների հիշատակին:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՓԱՐԻԶԻ «ՍԱԼ ԳԱՎՈ» ԴԱՀԼԻՃՈՒՄ

Տարիներ առաջ Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով հրահանգվեց՝ ամեն տարի մայիս ամսվա մեջ ոգեկոչել «յիշատակն աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի յամի 1918 վասն հաւատոց և հայրենեաց»:

Այսօր էլ մեծ հանդիսությամբ Փարիզում ոգեկոչվեց այդ հերոսամարտի 61-րդ տարեդարձը:

«Սալ Գավո»-ի ընդարձակ հանդիսասրահը լցվել էր խուռներամ բազմությամբ: Հանդիսության բացումը կատարեց տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը հետևյալ ճառով.

«Այսօր այստեղ հավաքված ենք ոգեկոչելու և փառավորելու Սարդարապատի ճակատամարտին հաղթանակը: Այս տոնակատարությունը բախտավոր զուգադիպությամբ մը կկատարվի ներկայությամբը Նորին Սուրբ Օծության Ամենայն Հայոց կաթողիկոսի, որ ոչ միայն բարեհաճեցավ Իր շնորհաբեր ներկայությամբը պատվել այս հանդեսը, այլ նաև Իր օրհնությամբը կատարել փակման խոսքը:

Ժողովուրդներու կյանքին մեջ դեպքեր կան, որոնք վճռական և ճակատագրական դեր կկատարեն անոնց կյանքին մեջ, նոր ուղղություն կբանան և վերապրելու նոր եռանդ կներշնչեն:

Մեր պատմությունը հարուստ է այդպիսի դեպքերով, բայց պետք է շեշտել, որ Սարդարապատը այդ բոլորին մեջ բացառիկ երևույթ մըն է. ան վճռական և ճակատագրական դեր կատարեց մեր ժողովուրդի գոյատևման տեսակետեն. տեսակ մը լինելու և չլինելու ճակատագրական պահն էր,

կա՛մ պարտություն և վերջնական բնաջնջում, կա՛մ հաղթանակ և վերապրում ու վերածնունդ:

Արդեն 1915-ի Մեծ եղեռնին ավելի քան մեկ ու կես միլիոն ժողովուրդ զոհ գացած էր ցեղասպանության, քանդված ու ավերակի էր վերածված ամբողջ Արևմտյան Հայաստանը, այդ անավոր դժոխքեն վերապրող մնացորդացը ապաստանած էր Արարատի ստորոտին, հովանիին ներքևը սուրբ Էջմիածնին, հյուծած, սպառած ու անտիրական հավաքականություն մը էր վերապրող հայ ժողովուրդը:

Ու ահա այդ օրերուն էր, որ դարավոր թշնամին չգոհանալով Արևմտահայաստանի ամբողջական բնաջնջումեն և կործանումեն, իր արյունոտ դունչը երկարեց նաև Արևելահայաստանի մեջ ապաստանած այդ բեկորներուն, նպատակ ունենալով Արևմտյան Հայաստանի ճակատագրին ենթարկել նաև վերապրող հայն ու մնացած փոքրիկ հողամասը Հայաստանի:

Թշնամին կազմակերպված, կանոնավոր բանակով, առատ ռազմամթերքով կհառաջանար՝ ցեղասպանությունը ամբողջությամբ իրագործելու, հայն ու Հայաստանը միայն պատմության վերապահելու և բնաջնջելու սադայելական նպատակով:

Հուսահատական վիճակ մը կտիրեր հայ ժողովուրդին մեջ: Մութ ու մռայլ ամպերը պատած էին Արարատի գագաթը և ս. Էջմիածնի գմբեթը: Ահա այսպիսի վիճակի մը մեջ էր, որ հայ ժողովուրդը ինքզինքը հավաքեց. միացավ ու տվավ իր վճռական որոշումը. ո՛չ, ասկե այլևս պիտի չանցնի թշնամին: Եվ ամբողջ հայ ժողովուրդը զորականներով և զինվորներով, եկեղեցականներով և մտավորականներով, այրերով և կիներով, նույնիսկ մանուկներով մեկ մարդու պես ծառացավ թշնամիին առջև Սարդարապատի դաշտին մեջ և օրհասական կռիվ մղեց իր գոյության և իր հայրենիքին համար: Հրաշքի համազոր հաղթանակ մըն էր, որ տարավ. հրաշքը, կրնամ ըսել, բխեցավ Մայր Աթոռ ս. Էջմիածնեն: Ճակատամարտի ղեկավարները իրենք ևս անվստահ իրենց հաղթանակին, նկատի ունենալով վտանգը, որ կսպառնար Ամենայն Հայոց կաթողիկոսի անձին, իրեն դիմեցին, որպեսզի ավելի ապահով տեղ մը փոխադրվի: Եվ Գևորգ Ե ծերունազարդ կաթողիկոսը, անբացատրելի արիությամբ և ամբողջ հայ ժողովուրդի կամքին որպես արտահայտություն՝ «Ո՛չ, ըսավ, Ամենայն Հայոց կաթողիկոսը միայն կմեռնի ս. Էջմիածնի տաճարի սեմին վրա»: Ան կմերժե հեռանալ, ընդհակառակն, ամբողջ Հայաստանի եկեղեցիներուն զանգակները հնչեցնել կուտա ու Գարեգին եպս. Հովսեփյանը և նման քաջասիրտ եկեղեցականներ ճակատ կդրկե՝ կովողները քաջալերելու և խրախուսելու համար: Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի շրթներեն իսկ լսած եմ. երբ ան ճակատ կհասնի, ամբողջ բանակը երկյուղած ծունկի կուգա, ինքը իրեն հատուկ հոգեկանությամբ վերացած կաղոթե և կօրհնե բանակը, ոտքի կելլե՝ կարծես ամեն հուսահատություն փարատած ու ամեն տկարություն մեկդի ձգած, հզորակամ և զորացած հառաջ կընթանա: Եվ կպատահի հրաշքը Սարդարապատին, որ մեր այսօրվան գոյության միակ պատճառը եղավ: Առանց Սարդարապատի հաղթանակին, այսօրվան Հայաստանը գոյություն պիտի չունենար, և աշխարհի չորս ծագերուն ցրված հայությունը անհայրենիք և անհույս համրանք մը պիտի ըլլար առանց ապագայի վերակազմության մը կարելիության:

1918-են մինչև հիմա ինչ որ ունինք՝ հայրենիք, մշակույթ, ստեղծագործություն, կպարտինք Սարդարապատի ճակատամարտին:

Հանախ Սարդարապատի ճակատամարտը կբաղդատվի Ավարայրի ճակատամարտին հետ: Նմանություններ կան. երկուքն ալ ճակատագրական եղած են մեր ժողովուրդին համար: Արդարև, երկու ճակատամարտերուն ալ դիմադրելու, տոկալու և ապրելու նույն ոգին է, որ կհայտնաբերե մեր ժողովուրդը, նույն դյուցազնական արիությունը և ազատատենչ ոգին: Ավարայրի պարտությամբ պիտի ձուլվեինք առանց բնաջնջվելու, պիտի չունենայինք այն նկարագիրը, որ մեր ժողովուրդինն է այսօր. պիտի չունենայինք ստեղծագործելու այն խանդը, որ մեր ժողովուրդը ունի. պիտի ապրեինք, բայց պիտի ըլլայինք տարբեր ժողովուրդ մը:

Սարդարապատի պարտությամբ ամբողջապես պիտի բնաջնջվեինք: Բայց անոր հաղթանակով իրապես հարություն առինք և նոր վերածնունդ մը սկսանք: Կարժե որ ոսկե տառերով արձանագրվի Սարդարապատի ճակատամարտի դեպքը մեր պատմության մեջ, և բոլոր հետագա սերունդները հարգանքով և երկյուղածությամբ խոնարհին այդ ճակատամարտը կերտող հերոսներուն հիշատակին առջև:

Այսօր, Ամենայն Հայոց կաթողիկոսի իսկ ներկայությամբ, այդ գիտակցությամբ կոգեկոչենք Սարդարապատի ճակատամարտին հիշատակը և բացված կհայտարարենք անոր նվիրված այս հանդիսությունը»:

Սարդարապատի հերոսամարտի ոգեկոչմանը նվիրված իր ելույթում փարիզահայ հայտնի նկարիչ և մտավորական Արտավազդ Պերպերյանը ասաց.

«Մայիս, 1918...:

Դարձյալ գարուն է...:

Հայոց աշխարհի բնությունը անգամ մը ևս կանաչներ է հագած: Անգամ մը ևս ծաղիկներ կան արևուն նայող:

Առվակներն ու վտակները ջինջ ու զով ջուրերով կիջնեն մեր ամեհի լեռներեն և հոս-հոն, մերթ մրմնջալով, մերթ երգելով, կմիանան իրար ու միասին կշարունակեն իրենց երթը: Մերթ համբաշարժ, մերթ խոլ վազքով անցնելով, նույն տեղերեն, նույն հովիտներեն, քղանցելով նույն բլուրները, անցնելով նույն գյուղերեն, նույն քաղաքներեն ինչպես ըրեր են միշտ:

Բայց ահա, այս արդեն չորրորդ գարունն է որ Հայոց աշխարհի առուներու և վտակներու զվարթ երգերը հետզհետե կլռեն ու մահագույժ խշխշոցի մը կվերածվին քանի կմոտենան ավերված գյուղերու և քաղաքներու, առնելով անոնցմե ածիւացած գերաններ, տիղմ ու մոխիր. դիակներ կքշվին անոնց ջուրերուն հետ...

1915-ի չարաշուք գարնան սկսած դարուս առաջին ցեղասպանությունը կշարունակվի դեռ... Ամայացած է հայոց դարավոր հայրենիքին մեծագույն մասը: Սուրե անցած կամ տեղահան եղած է ամբողջ Արևմտյան Հայաստանի խաղաղ բնակչությունը:

Ու հիմա, 1918-ի այս գարնան, այդ Մեծ սպանդեն մազապուրծ մարդիկ՝ կիներ, ծերունիներ ու երեխաներ, կլքեն իրենց ետև ամեն ինչ, ու կքալեն նահանջող բանակներուն հետ դեպի Արարատյան դաշտ, դեպի վերջին ապաստանը հայության...:

Կքալեն անոնք լքելով իրենց ետին այնքան աղոթքներ լսած իրենց հազարամյա եկեղեցիներն ու վանքերը:

Կքալեն անոնք լքելով իրենց ետին այնքան սերունդներու արցունքով օծված՝ պապենական շիրիմներն ու խաչքարերը...:

Կքալեն անոնք լքելով իրենց ետին այնքան սերեր ու գուրգուրանքներ ապրած իրենց այգիները, ծառաստաններն ու դաշտերը...:

Կքալեն անոնք լքելով իրենց ետին այնքան խաղաղ շիջումներ, այնքան զվարթ հարսանիքներ, այնքան երջանիկ ծնունդներ տեսած իրենց պապենական օջախները...:

Կթողուն իրենց ետին ամեն ինչ, ամեն ինչք, ամեն սեր, ամեն հիշատակ, ամեն սրբություն, ամեն վերադարձ... Ու կքալեն, հոգնաբեկ ու հուսաբեկ, կքալեն գլխիկոր ու կքած, կքալեն դեպի Արարատյան դաշտ...:

Իրենց ետևեն, ճիշտ ետևեն, իրենց քայլերուն իսկ վրան, կուգան թրքական բանակն ու անոր ընկերակցող ավազակներու և մարդասպաններու անկանոն ամբոխները. կուգան անոնք արյան հոտեն գինով, կուգան անոնք սովալլուկ գայլերու անագին ոհմակի մը նման:

Այս էր վիճակը 1918-ի մայիսին:

19-ի մայիսին թուրքերը կգրավեին Ալեքսանդրապոլը, որմե հետո, երկու թևի բաժնվելով՝ մին կհառաջանար դեպի Ղարաքիլիսե, իսկ մյուսը՝ դեպի Երևան: Մայիս 21-ին թուրքերը կգրավեին Սարդարապատ գյուղը:

Կացությունը հուսահատական էր:

Երևանն ու Էջմիածինը շրջապատվելու վտանգին առջև, Բաթումի հայ պատվիրակությունը կհրամայեր Երևանի Դումային քաղաքը հանձնել թշնամիին և քաշվիլ դեպի Կոտայքի բարձունքները...:

Այս այն զորքն էր, որ Երզնկայեն, Էրզրումեն անդադար կռվելով, անդադար նահանջելով հիմա Արարատյան դաշտ հասած էր և այժմ, վերածված հազիվ 4-են 5 հազարի հասնող զինվորական ուժի մը, անգամ մը ևս պետք էր նահանջեր:

Նահանջի այս հրամանը բայց բոլորովին տարբեր ազդեցություն մը պիտի ունենար այստեղ խռնված բազմություններու վրա:

Ժողովուրդը կզգար, թե այլևս անհնար է նահանջել, հանձնել Արարատյան դաշտը, հանձնել Երևանը ու մանավանդ հանձնել սուրբ Էջմիածինը:

Ամենքը կհասկնային, թե այդ պիտի նշանակեր վերջնական անէացման ենթարկել ամբողջ հայությունը, Արևմտյան Հայաստանի ճակատագրին հանձնել նաև Արևելյան Հայաստանը:

«Հաղթել կամ ոչնչանալ», հիմա այլևս այս էր միակ հարցը:

Այդ օրերուն, հույսերու արշալույս մը չէր, որ կապրեր հայ ժողովուրդը:

Բախտի անիվը դարձած էր ու հասած իր ամենեն ցած կետին. նորեն զայն դարձնելու, նորեն այդ կետը բարձրացնելու համար պետք էր ամենամեծ հավաքական կամքը, հավաքական հոգեբանության ամենամեծ հեղաշրջումը:

Այդ կարող են ընել միայն այն ժողովուրդները, որոնք ունին ներքին հզոր ուժ մը, որ կարելի կընե ամեն մեկուն բազմապատկումը, հավաքական կարողությունը ինքզինքը գերազանցելու...:

Միայն այդպիսի ժողովուրդներն են, որ ի վերջո կնվաճեն, հաչս պատմության և հաչս աշխարհին, արևի տակ ապրելու արդար իրավունքը:

Եվ այդ ճգնաժամային պահուն, հայ ժողովուրդը գտավ իր մեջ այդ գերբնական ուժը:

Հայ ժողովուրդը գտավ այդ գերբնական կորովը իր զավակներուն ամեն

մեկուն մեջ— զինվորական թե շինական, աշխարհազորային թե կղերական, երիտասարդ թե ծերունի, կին թե երեխա:

Գտավ այդ միաձույլ ու միակամ ուժը, որով կարելի կըլլա ճակատագիրներ դրժել, և զոր շատ անգամ հրաշք կկոչենք:

Թույլ տվեք, որ շատ հպանցիկ կերպով անդրադառնամ Սարդարապատի ճակատամարտի ռազմական փուլերուն և չծանրանամ անոնց վրա:

Ըսեմ միայն, թե մայիս 21-են 22 լուսցող առավոտուն արդեն սկսած էին առաջին բախումները հայ աշխարհազորայիններու (որոնք առանց հրաման ստանալու դիրքեր էին գրաված) և Երևանի վրա արշավող թրքական անկանոն զորքերու միջև:

Այդ բախումները առաջին ազդանշանները եղան ժողովրդական մեծ դիմադրության, որոնք պատճառ եղան, որ հայոց կանոնավոր զորքը, որ դեպի Կոտայք նահանջելու կպատրաստվեր, վերադասավորվեր և հակահարձակման անցներ:

Մայիս 22-են 26 տևող այդ չորս բախտորոշ օրերու ընթացքին, տեղի ունեցան աներեւ մարտեր, ուր հայ զորքերուն և աշխարհազորայիններու խիզախ հարձակումներուն շնորհիվ, թրքական Կելիքոլու անունը կրող զորամասը, որ մարտական մեծ հոչակ կվայելեր, ջախջախվեցավ և ետ շպրտվեցավ... Սարդարապատի հաղթանակը կրկնվեցավ նաև Բաշ-Ապարանի մեջ, ուր Երևանի վրա արշավող թրքական զորքին դեմ ելան շրջանի զինված գյուղացիները... Նույն հաղթանակը կտարվեր նաև Ղարաքիլիսեի մեջ:

Սարդարապատի հաղթանակով սակայն տակավին վերջ չգտավ հայ Գողգոթան:

Ունեցանք նոր դառնություններ, նոր հուսախաբություններ, նոր խոստումներ ու նոր դրժումներ, նոր բռնություններ, նոր պատերազմներ ու վերջապես անգամ մը ևս, մահվան սպառնալիքը կախվեցավ հայ ժողովուրդի գլխին: Հայությունը անգամ մը ևս զգաց մահվան գարշահոտ շունչը:

Անգամ մը ևս թրքական բանակը մտավ Ալեքսանդրապոլ, հասավ մինչև Երևանի դռները:

Անգամ մը ևս, մինչև 1920-ի նոյեմբեր 29-ի բախտորոշ թվականը, երբ սովետական կարգերու հոչակումը կասեցուց, ընդմիշտ կասեցուց, հայության դարավոր ճամփու ընկերը եղող մահվան սպառնալիքը:

1918-են մինչև 1920, հայ ժողովուրդը երկու անգամ գտնվեցավ վերջնական անէացման սպառնալիքին առջև և երկու անգամ ալ հայ ժողովուրդը պարտության մատնեց մահը:

Այսօր այդ օրերեն 61 տարիներ վերջ, բոլորովին փոխված է հայ ժողովուրդի ճակատագիրը:

Մեր փոքրիկ Հայաստանը կապրի իր աննախընթաց ծաղկումը: Թեև փոքր իր սահմաններուն մեջ, թեև անդամահատված, բայց վերջապես կա ան ու մերն է:

Հայոց հայրենիքն է ան:

Կրավե անցնիլ անոր մայրաքաղաքի, վարդագույն Երևանի պողոտաներեն ու հրապարակներեն՝ համոզվելու համար, որ մերն է ան ու արժանի մեր պատմության:

Վկա Ծիծեռնակաբերդի երկնասլաց ու վեհ հուշարձանը. վկա Սասունցի Դավթի արձանը. վկա Վարդան Մամիկոնյանի արձանը. վկա Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, ուր վերջապես ապահով ու գուրգուրոտ ձեռքերու մեջ կվերապրին մեր ձեռագիրները:

Վկա երջանիկ ու հայերեն գեղգեղող մեր երեխաները: Վկա մեր արվեստագետները, մեր ճարտարապետները, մեր գիտնականները, մեր բանաստեղծները. վկա մեր թանգարանները:

Վկա մեր վերածաղկող ու հրաշագեղ սուրբ Էջմիածինը, վկա վերապրող մեր եկեղեցիներն ու ճարտարապետական հուշարձանները:

Վկա այս բոլորը, որ հարություն կապրին, որ այնտեղ ամեն ինչ հայ է, որ Հայաստանը մերն է ու պետականություն է ան:

Սարդարապատի հաղթանակը ու անոր հերոսներու հիշատակը անմահացնելու համար Հայաստանի կառավարությունը հրաշալի համալիր մը կառուցած է (և որուն ամենքն ալ ծանոթ են), բայց միթե ամբողջ վերածնած Հայաստանը անոնց հիշատակը հավերժացնող գերագույն հուշարձանը չէ՞...

Բայց դժբախտաբար այլ է պատկերը, երբ դեմ ու հանդիման կգտնվինք մեր՝ սփյուռքահայերուս լինելության հարցին:

Այստեղ, ընկլուզիչ քաղաքակրթություններու հեշտալուր բռնության ենք ենթակա. անոնք կսպառնան տանիլ մեզ հոսանքն ի վար, դեպի ազգային անէացում:

Տակավ, բայց հետզհետե ավելի անդիմադրելիորեն, անոնք կջանան թավալել մեզ հետզհետե ավելի մեծ թափով ազգային հավատամքներու ուրացումներու վիհը: Դեպի ջլատում մեր հավաքական կյանքին ու կամքին. դեպի եղծումը ազգային մեր իտեալներուն ու ավանդություններուն...:

Այլ խոսքով՝ տակավին չէ դադրած կենաց ու մահու պայքարը մեր ժողովուրդին մյուս կեսին համար, ցիրուցան աշխարհով մեկ, մեզի, սփյուռքահայերուս համար:

Ժողովուրդները կհարատևեն, երբ անոնք գիտեն ներկան լուսավորել իրենց փառավոր անցյալով. ժողովուրդները կապրին, երբ գիտեն իրենց նախնիներու հիշատակը, համայնական հիշողության մը մեջ, կենդանի պահել: Երբ անցյալը ոգեղեն ջահի մը նման կլուսավորե թե՛ ներկան և թե՛ դեպի ապագան առաջնորդող ճանապարհը...

Վերը հիշած ընկլուզիչ քաղաքակրթություններուն առաջ մեր բոլո՛ր ուժերը, մեր բոլո՛ր կամքը ի մի հավաքելու վասն մեր ազգային իտեալներու իրագործման, վասն մեր լեզվի ու մշակույթի պահպանման, վասն մեր ազգային ավանդություններու անաղարտ պահպանման:

Մեկ խոսքով՝ հառա՛ջ դեպի միասնականություն:

Բայց միասնականությունը կարելի չէ կերտել ավազի վրա, կարելի չէ կերտել խաբուսիկ երազներու, ինքնախաբեություններու ու ինքնօրորման մեջ:

Միասնականությունը պետք ունի իրատեսության. պետք ունի հզոր ու զողիչ ազդակներու, որոնց կարևորագույններեն մին է մեր այսօրվա վերածնած Հայրենիքը:

Սփյուռքը չի կրնար ապրիլ, եթե իր երեսը դարձնե մայր հայրենիքեն:

Սփյուռքը չի կրնար ապրիլ առանց իր հայ առաքելական եկեղեցվո հզորացման, առանց Էջմիածնա սուրբ Աթոռին:

Այսօր, Սարդարապատի հաղթանակեն 61 տարիներ վերջ, ի՞նչ է նպատակը այս ոգեկոչման, եթե ոչ ներշնչվիլ միասնականության հրավիրող այդ հզոր պատգամեն:

Ի՞նչ է նպատակը այս ոգեկոչման, եթե ոչ հասկնալ, վերջապես հասկընալ, թե Սարդարապատի հաղթանակին վեհությունն ու մեծագույն պատ-

գամը կկայանան անոր մեջ, որ այդ դժնդակ ու ճակատագրական պահուն, հայ ժողովուրդը գիտցավ մեկդի դնել գաղափարական բոլոր տարակարծությունները, բոլոր հին կամ նոր ոխերն ու վեճերը ու միանալ. միաճակատ ու միակամ դուրս գալ հաղթահարելու համար իր գոյության իսկ սպառնացող թշնամին:

Այժմ, մեզի՝ սփյուռքահայերուս կմնա այդ մեծ պատգամն ներշնչվիլ ու կազմակերպել մեր ազգային ու հանրային կյանքը. կազմակերպել մեր գոյապայքարը:

Փա՜ռք անոնց, որ ինկան հանուն հայության և հանուն հայրենիքին:

Փա՜ռք անոնց, որ ինկան «իմացեալ մահով» և փակեցին իրենց աչքերը՝ տանելով իրենց հետ, որպես կյանքի վերջին և գերագույն պարգև, պատկերը վեհաշուք Արարատին:

Փա՜ռք անոնց, որոնց լսած վերջին ձայները եղան փամփուշտներու սուլոցն ու մեր եկեղեցիներու զանգակներու անազանգող ղողանջները, որոնք նույն ատեն գալիք հաղթանակներու ավետաբեր ղողանջումներն էին...»:

Այնուհետև ելույթ ունեցավ փարիզահայ մտավորական մեթր Հովիկ Եղիազարյանը: Իր ելույթում նա ասաց.

«Վեհափա՛ռ Տեր,

Թույլ տվեք ինձի ըսելու, որ Ձեր և Ձեր շքախումբին այցելությունը բացառիկ բնույթ, բացառիկ տարողություն կուտան այսօրվան հանդիսության: Այս տոնակատարությունը, իսկապես, համահայկական կերպարանք կստանա: Ձեզմով հայրենիքն է, որ կուգա միանալու փարիզաբնակ հայության, միասին ոգեկոչելու համար 61-ամյակը մեր ժամանակակից պատմության մեծագույն փառքի: Ահա թե ինչու այսօր անսահման է հրճվանքը և խանդավառությունը ներկաներու: Այդ արդեն ապացույց մըն է, որ ֆրանսաբնակ հայ գաղութը պահած է մոտավորապես 60 երկար տարիներե ի վեր իր կորովը, կարելիության սահմաններու մեջ, պայքարելու և ապահովելու համար մեր ազգային ինքնուրույնությունը: Ձեր այս այցելությունը, զոր կատարեցիք վերջին շաբաթներու ընթացքին, կխրախուսե մեր գաղութը: Խընդրեմ, ընդունեցե՛ք մեր որդիական սիրո և հարգալիր զգացումներուն, ինչպես և խորին ակնածանքին հավատիքը:

Խավարումներ շատ է տեսած ու ապրած մեր ժողովուրդը իր դարավոր, որքան փառահեղ, նույնքան ալեկոծ կյանքին մեջ: Բայց հայոց պատմությունը կվկայե, որ օրհասական պահերուն, տագնապալի շրջաններուն հայը կորսնցուցած չէ հարության իր խոր հավատքը:

Արդարև, տասնևհինգ անգամ 100 տարիներ առաջ, երբ Հայաստան աշխարհի դաշտն ու ձորը, հողն ու սարը մեռելության ձյունի խորունկ շերտերուն տակ թաղված ու թմրած էին, բուռ մը խիզախներ, Վարդանանք, նետեցին մեկ հատիկ հունդը, ազատության, արդարության և անկախության հունդը: Վարդանանք ոռոգեցին հունդ ու դաշտ իրենց սրտի արյունով:

Տասնևհինգ անգամ 100 տարիներու թանձրացյալ փոշին չկրցավ խեղդել այդ մեկ հատիկ հունդը: Փոթորիկ, մրրիկ, տարերք ամեհի և կատաղի, որոնք անցան Հայոց աշխարհի վրայեն, այդ սրբազան հունդը խաթարել չզորեցին երբեք:

Ու ահա, 61 տարի առաջ, մայիս ամսույն ան վերստին ծաղկեցավ, թեպետ և ծխարձակ ու ավերյալ, բայց լույս ճառագայթող պատերուն տակ, որուն անունը այլևս ոսկետառ պիտի արձանագրվեր մեր ազգային մատյանի էջերուն վրա՝ Սարդարապատ:

...Այդ օրը կողողանջեին զանգակները ս. Էջմիածնի՝ փրկված պղծումե, ավարե և ավերե, ու անոնց հնչյունը արձագանք կուտար ամեն հայու հոգիին մեջ: Այդ օրը, Երևանեն մինչև արտասահման ցնծությամբ կլեցվեր հայությունը Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսեի, Սարդարապատի մեր հաղթական թնդանոթներու որոտումեն: Սարդարապատ կանգ առնել կուտար վերջնականապես մեր դարավոր թշնամին, ու այդ օրը կորոշվեր պատերազմի ճակատագիրը: Այդ տեսակետեն, մենք անվարան կրնանք ըսել, որ Սարդարապատ մեր պատմության Ստալինգրադի փառապանծ դյուցազնամարտն է:

Փա՜ռք մեր բյուրավոր մարտիկներուն և անմոռանալի զորավարներուն, որոնք արյունահեղ ճակատամարտերու ընթացքին, ազատագրելով մեր պապենական հողերու մեծ մասը, ապահովեցին մեր ժողովուրդի ապագան:

...Այդ մարտիկներուն, այդ զորավարներուն քաջագործություններով, անոնց բարձր օրինակով է, որ մենք վառ կպահենք ու ապագային հնարավոր պիտի ըլլա վառ պահել մեր երիտասարդության մեջ ազգային հպարտությունը:

Սարդարապատ փրկեց մեր ժողովուրդը ի հիմանց անկումե: Ան զորացուց մեր ինքնավստահությունը, լարեց մեր հարատևելու կամքը: Եթե Սարդարապատ պատերազմի մը վերջավորությունն է, ան, ի մասնավորի մեր պատմության մեջ սկզբնավորություն մըն է: Ան սկիզբն է 20-րդ դարուն մեր նոր վերածնունդի, մեր զարթոնքի:

...Արարատյան դաշտին մեջ մարտնչող հոգնած և ընկճված այդ ժողովուրդը, այդ օրեն սկսյալ, նոր կյանք առած, նոր եռանդ ստացած, ամենադժվարին պայմաններու մեջ, քարուքանդ եղած երկրի մը մեջ, կլծվեր երկրի վերաշինության աշխատանքներուն ու զանոնք կվարեր ոգևորությամբ: Մայիսի 28-ին ստեղծված հանրապետության ժառանգորդն է այսօրվա մեր հայրենիքը: Հայրենիք մը, զոր մեր ժողովուրդի ստեղծագործ միտքը, շինարար հատկությունները վերածած են այսօր աճող, ծաղկող, հառաջդիմող երկրի մը: Հայրենիք մը, որուն տեսարժան վայրերը, քաղաքները, մայրաքաղաքը, «Երևան դարձած իմ Էրեբունի»-ն, ինչպես կըսե Պարույր Սևակ, տարածուն և այժմ իր մեկ միլիոն և ավելի բնակիչներով հրճվանք կպատճառե բոլորիս և հիացում՝ օտարներուն:

Հայրենիք մը, որու շինարարական, գիտական, մշակութային մարզին մեջ հայտնաբերած նվաճումները նույնպես կհրճվեցնեն մեզ:

Հայրենիք մը, որը տվավ և կուտա աշխարհահռչակ համբավ ունեցող գիտնականներ, մտավորականներ, արվեստագետներ, որոնք այսօր բարձր կպահեն մեր մտքի արժանիքը աշխարհի մեջ:

Վերջապես, հայրենակիցներ, հողային հայրենիք մը՝ պաշտամունքը բոլորիս:

Բայց, ավա՜ղ, մեր ժողովուրդի կեսեն ավելին հեռու կգտնվի իր մայր հայրենիքեն: Սարդարապատ չլուծեց մեր ամբողջական դատը, քանի որ դեռ գոյություն ունի հայկական սփյուռքը:

Ամեն պատմական դեպք խորհուրդ մը, պատգամ մը կպարունակե: Մեր արդար և անժամանցելի իրավունքներու պահպանման նկատմամբ և նպատակով ջանանք ըմբռնել և գործադրել այն պատգամը, զոր ձգեց Սարդա-

բապատի առջև կռվող և նահատակվող հայը այսօրվան հայերուս: Այդ՝ պատգամն է համագործակցության, միասնականության անհրաժեշտության, հասնելու համար մեր նպատակներուն:

Անտարակույս գաղափարներու զանազանություն, քաղաքական կուսակցություններու գոյություն, քաղաքական սկզբունքներու, ընկերային այլազանություն, ժողովուրդի մը զարգացման և անոր կենսունակության ապացույցն է:

Բայց լեզվի, սերունդի փրկությունը համագործակցություն կպահանջեն ժողովուրդի մը բոլոր առողջ, անկեղծ և գործոն տարրերուն միջև:

Արտասահմանի հայությունը պետք է ձգտի այդ համագործակցության, այլապես ան ենթակա է, մինչև իսկ դատապարտված է իյնալու այն անհեղ խառնարանին մեջ, ուր դարեր առաջ ցեղեր և ազգեր հալած են: Այդ համագործակցության ոգին արդեն կտեսնենք, որ գոյության կոչված է, և մենք ուրախությամբ կտեսնենք, որ միասնականության ոգին, գործադրության դրված է այս վերջին տարիներու ընթացքին:

...Ամրապնդենք մեր ներքին կառույցը, ամեն ներքին վեճ, պառակտում, ազգային շահերու վերաբերմամբ, մահացու վտանգ է, հայրենակիցներ: Ինչ որ կբաժնե մեզ՝ աղետ է, իսկ ինչ որ կմիացնե՝ օրհնություն և հաջողության երաշխիք:

...Այնուհանդերձ, Սարդարապատի լուսաստիյուր փարոսեն առաջնորդված՝ քալենք դեպի ապագան, անվհատ և անվեհեր ու մանավանդ միակամ, որպեսզի այլևս չըլլա ներսի և դուրսի հայ, հայրենաբնակ և ափյուռքաբնակ հայ, հայրենատեր և հայրենազուրկ հայ, այդ օրը ըլլան միայն հայեր, համախմբված, վերջապես ու վերջնականապես մեր հայրենի հողի վրա, տեր իրենց ճակատագրին»:

Հանդիսության ժամանակ գործադրության դրվեց ճոխ մի հայտագիր՝ բաղկացած երգերից, արտասանություններից, նվագից: Ելույթ ունեցավ Փարիզի «Դպրոցասեր տիկնանց» և «Սամվել-Մուրադյան» վարժարանների միացյալ երգչախումբը՝ ղեկավարությամբ Գևորգ Յանքեկյանի: Կատարվեցին «Իբրև արծիվ», «Սարդարապատ» և «Տէ՛ր կեցո՛» երգերը: Երգչուհի Սոնա Նիկողոսյանը կատարեց Կոմիտաս վարդապետի «Օրոր», «Չինար ես» և «Կաքավիկ» երգերը: Տիկին Մադին Էքիզյան-Կարպանտիեն արտասանեց Եղիվարդի «Կարմիր Զորավար» պոեմից հատվածներ: Սյուզան Միլտոնյանը տավիղի վրա նվագեց արևմտաեվրոպական երաժշտության մի շարք կտորներ և Արամ Խաչատրյանի «Արևելյան պար»-ը:

Վերջում ելույթ ունեցավ Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբության հայրենաշունչ և բովանդակալից ճառը տպագրված է «Էջմիածին» ամսագրի սույն համարի սկզբում (էջ 12—16):

* * *

Մայիսի 28-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Փարիզի հայոց առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունեց Ֆրանսիայում պապական նվիրակ, կարդինալ Էգանո Ռիգի Լամբերտինիի այցելությունը:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը ընդունեց ԺԱՖ-ի Փարիզի կենտրոնական վարչության ներկայացուցիչների այցելությունը՝ գլխավորությամբ վարչության նախագահ Մասիս Փեհլիվանյանի:

Ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետին այցելեցին ֆրանսահայ մշակութային միության ներկայացուցիչներ Պարգև Մուրադյանը, Արտավազդ Պերպերյանը, Սյուզան Յաղջյանը և Գևորգ Սարյանը:

Մայիսի 29-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը երկօրյա այցելությամբ մեկնեց Ժնև՝ ընկերակցությամբ տ. Գյուտ եպիսկոպոսի:

Մայիս 30-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 20-ին, ֆրանսիական հանրապետության կապի մինիստր Նորբեր Սեգարը մինիստրության շենքում ճաշկերույթ տվեց ի պատիվ Հայոց Հայրապետի:

Ճաշկերույթի ժամանակ Վեհափառ Հայրապետը հետևյալ ուղերձով ողջունեց կապի մինիստր Նորբեր Սեգարին.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ՄԻՆԻՍՏՐ ՆՈՐԲԵՐ ՍԵԳԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(30 մայիսի 1979 թ.)

Ձերդ Գերազանցություն,

Տիրոջ օգնականությամբ և հրավերովը Ֆրանսայի հայ առաքելական եկեղեցվո հայրապետական պատվիրակ Գերաշնորհ տ. Սերովբե արքեպիսկոպոսի, ժամանեցինք ձեր գեղեցիկ երկիրը, Մեր օրհնությունները բաշխելու Ֆրանսայի Մեր հոգևոր զավակներուն և անոնց եկեղեցիներուն:

Յարդ Մենք այցելեցինք Մարսիլիա, Բորդո, Նիս, Վալանս և Լիոն քաղաքները, ուր հաստատեցինք թե հայ հավատացյալները համախմբված կապրին իրենց աղոթքի տուներուն հովանիին ներքև իբրև կրոնական համայնքներ՝ պահպանելով իրենց հոգևոր և մշակութային ավանդությունները, մնալով միաժամանակ հավատարիմ, կարգապահ և շինարար քաղաքացիները իրենց նոր հայրենիքի:

Եվ ահա այժմ կգտնվինք Փարիզ նույն առաքելությամբ:

Մեզի համար շատ հաճելի անակնկալ մը եղավ, պարոն Նախարար, Ձեր սիրալիր հրավերով այսօր Ձեր սեղանին շուրջ գտնվիլ: Այս պահը Մենք խիստ բացառիկ և հատկանշական կնկատենք ճիշտ անոր համար, որ պաշտոնական հանգամանք չունի, բայց Դուք, մղված իսկապես քրիստոնեական սիրո և հայ ժողովուրդի հանդեպ բարեկամական զգացումներե, Մեզի պարգևեցիք այս հաճույքը գտնվելու Ձեզի հետ, շրջապատված հոգևոր և աշխարհական բարձրաստիճան անձնավորություններե: Խորապես զգացված ենք Մեր նկատմամբ ցուցաբերված այս ուշադրության համար, որ շարունակությունն է սուրբ Էջմիածին Ձեր այցելության առիթով Ձեր արտահայտած բարեկամական զգացումներուն:

Ինչպես Հայաստանի մեջ, նաև այստեղ, այս պահուն կզգանք, որ Դուք, ֆրանսական կառավարության բարձր պաշտոնատար, բարի քրիստոնյա մըն եք, և վստահ ենք թե Ձեր բարձր ծառայությունները Ձեր հայրենիքի հանդեպ ի կատար կածեք այդ իրապես քրիստոնեական ոգիով՝ հումոզված ըլլալով, թե այդ ոգին է որ մեր օրերու մարդկությունը պիտի առաջնորդե դեպի նավահանգիստը խաղաղության և բարի կամեցողության մարդոց միջև:

Կապրինք փոթորկահույզ ժամանակներ, կապրինք տագնապներով լի ժամանակներ, կապրինք որոնումներու և սպասումներու ժամանակներ: Մեր օրերուն շատեր հոռետես են, շատեր՝ հուսահատ: Քրիստոնյան երբեք

պետք չէ ըլլա հուսահատ և ոչ ալ հոռետես, վասնզի Հիսուսով մեղքը խափանվեցավ և չարը պարտվեցավ հաղթությամբ:

Մենք կխորհինք, որ Քրիստոսի եկեղեցին, այս տեսիլքով ներշնչված, պարտի լսելի դարձնել իր խոսքը և գործել այս ոգիով, կատարելու համար իր առաքելությունը մեր ժամանակներու մարդոց և ազգություններու մեջ՝ առաջնորդելով զանոնք դեպի ճանապարհը սիրո, ճանապարհը արդարության և ճշմարտության, ճանապարհը խաղաղության:

Մխիթարական է Մեզի համար հաստատել, թե Ձեր մեծ եկեղեցին, մանավանդ այս վերջին տասնամյակներուն, դարձած է ջահակիրը քրիստոնեական այս մեծ առաքելության:

Իբրև առաջին սպասավորը Հայ առաքելական եկեղեցվո, Մենք ևս կջանանք կատարել Մեր պարտականությունը Հայաստանի մեջ, մեր երկրին հատուկ պայմաններուն մեջ և հետզհետե ավելի կհամոզվինք, թե Քրիստոսի խոսքը իրոք կհանդիսանա ավետիս մը, թե Քրիստոսի խոսքը տակավ կդառնա ոգեկան հզոր ուժ մը՝ ընդունակ հեղաշրջելու և վերանորոգելու մարդոց հոգիները:

Թույլ տվեք, Ձերդ Գերազանցություն, վերջացնել իմ խոսքը՝ Ձեզի և այս սեղանին շուրջ գտնվող Մեր սիրելի եղբայրներուն բերելով Մեր ողջույնը քրիստոնյա Հայաստանեն և Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Սեղանեն:

Մայիս 31, հինգշաբթի:

Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Սևրի «Սամվել-Մուրադյան» վարժարանը: Ի պատիվ Հայոց Հայրապետի այստեղ աշակերտության ուժերով գործադրության դրվեց գեղարվեստական մի հայտագիր: Վարժարանի տեսուչ հայր Սերովբե Ագլյանը ողջունեց Հայոց Հայրապետի ներկայությունը վարժարանի հարկի տակ:

Ի պատասխան տեսչի ուղերձի, Հայոց Հայրապետը տվեց Իր օրհնությունը և այս առթիվ վարժարանին նվիրեց ս. Էջմիածնի Մայր տաճարի գունավոր մեծադիր նկարը և «Հայկական խաչքարեր» ալբոմից մի օրինակ: